

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՃՇՀԱՀ)**

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1. Մասնագիտության թվանիշը և անվանումը	«073101.00.7 – ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»
2. Կրթական ծրագրի թվանիշը և անվանումը	«073101.01.7 – ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»
3. Ծրագրի հավատարմագրումը	—
4. Շնորհվող որակավորումը	Ճարտարապետության մագիստրոս
5. Ուսումնառության հիմնական լեզուն	Հայերեն
6. Ուսուցման ձևը	Առկա
7. Ծրագրի ընդունելության պահանջները	Մագիստրոսի առկա ուսուցման ծրագրի համար - ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007թ-ի դեկտեմբերի 6-ի N1193-Ն հրաման, ՃՇՀԱՀ-ի մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կանոնակարգ
8. Ծրագրի նպատակները	<p>Ծրագրի նպատակն է.</p> <ul style="list-style-type: none"> • ապահովել բարձրորակ մասնագետներ տվյալ ոլորտում; • զարգացնել գիտահետազոտական և վերլուծական մտքի ունակությունները; • ներկայացնել ճարտարապետության և հարակից ոլորտների համընդհանուր կապը և ազդեցությունը միմյանց վրա; • պատասխանատվությամբ և էթիկական կանոններով մոտենալ մասնագիտական խնդիրների լուծմանը; • տիրապետել մասնագիտական ոլորտում թիմային աշխատանքների ինտեգրման կարողություններին; • ձեռք բերել մասնագիտական դասավանդման դասընթացներ իրականացնելու ունակություններ; • ձեռք բերել մասնագիտական ոլորտում որոշում կայացնելու ունակություններ:
9. Ծրագրի կրթական վերջնարդյունքները	Կցվում է
10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները: Դասավանդման, ուսումնառության և գնահատման ձևերն ու մեթոդները	

<p>Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն.</p> <p>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Ա1. ցույց տալ առաջադեմ գիտելիքներ ճարտարապետական ստեղծարարության հիմքում ընկած գործընթացների, հայեցակարգերի և մշակութային արժեքների մասին,</p> <p>Ա2. վերարտադրել համապարփակ գիտելիքներ և իմացություն ճարտարապետական ստեղծագործության հիմքում ընկած նյութերի լայն տեսականու, շինարարական տեխնոլոգիաների, միջավայրի, քաղաքաշինության (տարածական պլանավորման), պատմաճարտարապետական ժառանգության պահպանության ու վերականգնման, տարածքների գոտիավորման, ճարտարապետական միջավայրի դիզայնի, էներգախնայող և պասիվ համակարգերի ժամանակակից տեսությունների, հետազոտությունների և նախագծման մեթոդների վերաբերյալ,</p> <p>Ա3. ներկայացնել նախագծման, շինարարության գործընթացների պլանավորման և իրականացման խնդիրները,</p> <p>Ա4. արտահայտել գիտելիքներ և իմացություն բնագավառի հայրենական և միջազգային պահանջների, նորմերի և կոնվենցիաների վերաբերյալ,</p> <p>Ա5. ցույց տալ մասնագիտական պատրաստվածություն և սուր քննադատական ընկալում ժամանակակից և պատմական ճարտարապետական ստեղծագործությունների վերաբերյալ,</p> <p>Ա6. բացահայտել տեղային ու գլոբալ ժողովրդագրության ռեսուրսների հետ քաղաքաշինության և ճարտարապետության կապերը ինովացիոն տեխնոլոգիաների կիրառման բնագավառում,</p> <p>Ա7. պարզաբանել թե ինչպես է ճարտարապետությունը գործում որպես առանձին մասնագիտություն և որպես ստեղծագործական արդյունաբերության մի մաս:</p>	<p>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</p> <p>Ուսանողը ձեռք է բերում մասնագիտական գիտելիքը և իմացությունը հետևյալ մեթոդներով.</p> <ol style="list-style-type: none"> 1. ինքնուրույն հետազոտության իրականացում, 2. ինքնուրույն վերլուծական, դասակարգման և եզրահանգման աշխատանքների կատարում, 3. նախագծային հարցադրումների համալիր լուծումների իրականացում, 4. լսարանային աշխատանքի իրականացում, <p>Գնահատման մեթոդները</p> <p>Ուսանողի մասնագիտական գիտելիքը և իմացությունը գնահատվում են հետևյալ մեթոդներով.</p> <ol style="list-style-type: none"> 1. նախագծման առաջադրանքի ներկայացում, 2. ճարտարապետահատակագծային լուծումների հիմնավորվածությունն ու նախագծի մատուցման որակը, 3. լսարանում կատարված առաջադրանքներ, 4. փուլային ընթացիկ աստեստավորում, 5. հետազոտական, վերլուծական աշխատանքի ներկայացում:
<p>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ</p> <p>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Բ1. հիմնվելով տեսության և պրակտիկայի վրա, վերլուծել հետազոտական աշխատանքներ</p>	<p>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</p> <p>Ուսանողը ձեռք է բերում գործնական մասնագիտական կարողություններ հետևյալ մեթոդներով.</p> <ol style="list-style-type: none"> 1. ինքնուրույն հետազոտության իրականացում

<p>տանքները, ինտեգրել գիտելիքները և դրանք կիրառել սահմանափակ տեղեկատվության պայմաններում, ինչպես նաև նոր կամ անձանոթ միջավայրում, այդ թվում՝ միջազգային ծրագրերի ենթատեսքում,</p> <p>F2. լուսաբանել նորագույն գիտական արդյունքները և զարգացնել գործնական գիտելիքները արդիական գրականության և տեղեկատվության այլ աղբյուրների հիման վրա,</p> <p>F3. կիրառել ճարտարապետության և միջմասնագիտական ոլորտներում, սահմանափակ տեղեկատվության պայմաններում տեսական և գործնական խնդիրների լուծման նորարարական մեթոդները,</p> <p>F4. վերլուծել բիզնեսի վարման սկզբունքները և դրանք կիրառել նախագծային մենեջմենթում և մասնագիտական գործունեության ժամանակ,</p> <p>F5. ընդհանրացնել և վերլուծել ուսումնառության հիման վրա ստացված արդյունքները՝ լուսաբանելով ճարտարապետության անցյալ և ներկա բանավեճի խնդիրները, թեմաներն ու արժեքները, ինչպես նաև սահմանելու ճարտարապետական կառույցների մշակութային դրսևորումները,</p> <p>F6. գնահատել մասնագիտական հաղորդակցման միջոցները՝ ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լսարանի հետ հաղորդակցվելու և եզրակացություններն ու հետազոտության արդյունքները փոխանցելու նպատակով,</p> <p>F7. վերլուծել, սինթեզել և գնահատել տարբեր աղբյուրներում առկա տեղեկատվությունը,</p> <p>F8. ցուցաբերել կազմակերպչական ունակություններ մարդկային ռեսուրսների կառավարման և պլանավորման համար, կարողանա ապահովել նախագծի ղեկավարումը և թիմային աշխատանքի ժամանակ կատարել դերաբաշխում, ստանձնի մասնագիտական և իրավական պատասխանատվություն թիմում այլոց աշխատանքի համար,</p> <p>F9. համեմատել ճարտարապետության և նրա հետ հատվող այլ ոլորտների խնդիրները:</p>	<p>ցում,</p> <ol style="list-style-type: none"> ինքնուրույն վերլուծական, դասակարգման և եզրահանգման աշխատանքների կատարում, նախագծային հարցադրումների համալիր լուծումների իրականացում, տեսական նյութերի յուրացում, լսարանային աշխատանքի իրականացում: <p>Գնահատման մեթոդները</p> <p>Ուսանողի գործնական մասնագիտական կարողությունները գնահատվում են հետևյալ մեթոդներով.</p> <ol style="list-style-type: none"> նախագծման առաջադրանքի ներկայացում, ճարտարապետահատակագծային լուծումների հիմնավորվածությունն ու նախագծի մատուցման որակը, լսարանում կատարված առաջադրանքներ, փուլային ընթացիկ աստեստավորում, հետազոտական, վերլուծական աշխատանքի ներկայացում:
<p>Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.</p>	<p>Դասավանդման և ուսումնառության մեթոդները Ուսանողը ձեռք է բերում ընդհանրական</p>

<p>Գ1. վերլուծել կատարված հետազոտությունները, իրականացնել հայեցակարգային, նախագծային ու աշխատանքային փաստաթղթերի մշակումներ մասնագիտական ոլորտում,</p> <p>Գ2. ցուցաբերել մասնագիտական մոտեցում և կայացնել որոշումներ՝ հիմնվելով սոցիալական, շրջակա միջավայրի և էթիկական գործոնների վրա,</p> <p>Գ3. գնահատել հետագա կրթության կարիքները և ձեռնարկել մասնագիտական հմտությունների և կարողությունների շարունակական զարգացումը,</p> <p>Գ4. գնահատել ճարտարապետական ուսումնառության ընթացքում ձեռք բերած համատեքստային, մշակութային և բնապահպանական իրազեկվածությունը և արդյունավետորեն կիրառել այն տարբեր իրավիճակներում,</p> <p>Գ5. օժանդակել իր գործունեությամբ ազգային արժեհամակարգի, պատմամշակութային փորձի և համամարդկային արժեքների տարածմանը:</p>	<p>կարողություններ հետևյալ մեթոդներով.</p> <ol style="list-style-type: none"> 1. ինքնուրույն հետազոտության իրականացում, 2. ինքնուրույն վերլուծական, դասակարգման և եզրահանգման աշխատանքների կատարում, 3. նախագծային հարցադրումների համալիր լուծումների իրականացում, 4. լսարանային աշխատանքի իրականացում, 5. տեսական նյութերի յուրացում: 6. լրացուցիչ մասնագիտական հանդիպումներով փորձի փոխանակում, 7. լրացուցիչ ֆակուլտատիվների և աշխատանքների միջոցով մասնագիտական փորձի հարստացում: <p>Գնահատման մեթոդները</p> <p>Ուսանողի ընդհանրական կարողությունները գնահատվում են հետևյալ մեթոդներով.</p> <ol style="list-style-type: none"> 1. նախագծման առաջադրանքի ներկայացում, 2. ճարտարապետահատակագծային լուծումների հիմնավորվածությունն ու նախագծի մատուցման որակը, 3. լսարանում կատարված առաջադրանքներ, 4. փուլային ընթացիկ ատեստավորում, 5. հետազոտական, վերլուծական աշխատանքի ներկայացում:
---	---

11. Ծրագրի ուսումնական պլանը
Կցվում է

12. Ուսումնական պլանի քարտեզը
Կցվում է

13. Գնահատման ձևերը

Ուսանողի կրթական գործառնություններն ու գործընթացները գնահատում է դասավանդող դասախոսը կամ հանձնաժողովը: Ուսանողի լսարանային և ինքնուրույն աշխատանքը գնահատվում է դասընթացի ծրագրում հաստատված գնահատման համակարգով: Կիրառվում է ուսանողի աշխատանքի փուլային գնահատման սկզբունքը՝ կատարվող աշխատանքի ընթացքը հսկելու նպատակով:

Ուսումնառության ընթացքում ուսանողները իրականացնում են հետևյալ գործառնությունները՝

- ա) տեսական աշխատանքի վերլուծություն և հիմնավորում,
- բ) գործնական առաջադրանքներ,
- գ) կուրսային նախագիծ,
- դ) ինքնուրույն աշխատանքներ,
- ե) մագիստրոսական թեզի փուլային ատեստավորումներ,

զ) պրակտիկա,

է) մագիստրոսական թեզի պատրաստում և պաշտպանություն:

Դասընթացի ծրագրով նախատեսված բաղադրիչների արդյունքների գնահատման համար կիրառվում է 20 միավորային սանդղակ՝ ըստ ներքոհիշյալ աղյուսակի.

Գնահատման ընդհանուր միավորը	Գնահատականը
18-20	5 (գերազանց)
14-17	4 (լավ)
8-13	3 (բավարար)
0-7	2 (անբավարար)

«Գերազանց» գնահատվում է առարկայական ծրագրի լիարժեք իմացությունը և նախագծի ամբողջական իրականացումը,

«Լավ» գնահատվում է առարկայական ծրագրի ոչ լիարժեք իմացությունը և նախագծի ոչ ամբողջական իրականացումը,

«Բավարար» գնահատվում է առարկայական ծրագրի մասնակի իմացությունը և նախագծի մասնակի իրականացումը,

«Անբավարար» գնահատվում է առարկայական ծրագրի թերի իմացությունը և նախագծի անբավարար իրականացումը:

14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

Ուսումը ավարտելուն պես, շրջանավարտները հնարավորություն ունեն անցնել աշխատանքի յուրաքանչյուր նախագծային կազմակերպություն, ձևավորելու իրենց մասնագիտական ուղին, ինչպես նաև շարունակել ուսումնառությունը ասպիրանտուրայում:

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

Ի լրումն հիմնական կրթական ծրագրի, ֆակուլտետում պարբերական սկզբունքով իրականացվում են. լրացուցիչ մասնագիտական հանդիպումներ արտաբուհական գործող ճարտարապետների և այլ ոլորտների մասնագետների հետ, ապահովելով բազմապրոֆիլ կրթություն և կապ գործող մասնագետների հետ:

Ամեն կիսամյակ Ֆակուլտետն իրականացնում է նաև տեղական և միջազգային նշանակության մասնագիտական աշխատանքներ, հրավիրելով մասնագիտական թեմաների շուրջ տեղացի և արտասահմանցի ուսանողների:

Նաև պարբերական սկզբունքով իրականացվում են ֆակուլտատիվներ և լրացուցիչ դասալսումներ:

16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

Կրթական ծրագրի մշակումը իրականացվել է ՀՀ Որակավորումների Ազգային Շրջանակի (ՈՍՇ) և ARMENQA-ի նկարագրիչներում սահմանված չափորոշիչների ու կողմնորոշիչների հիման վրա: Մասնագիտական առարկաների ծրագրերը մշակվել են ճարտարապետության ֆակուլտետի երեք թողարկող ամբիոնների կրթական ծրագրերի վերջնարդյունքներին համապատասխան:

17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

Ծրագիրը կոչված է ապահովել ճարտարապետական կրթության հնարավորինս լիարժեք իրականացումը և պատրաստել բարձրորակ մասնագետներին:

		Կրթական ծրագրի վերջնարդյունքները	Ազգային շրջանակի նկարագրիչները
Որակավորման ընդհանուր նկարագիրը (բնորոշումը)		<i>Ճարտարապետության մագիստրոսի որակավորման աստիճան է շնորհվում անձանց, ովքեր ունեն խորը մասնագիտացված գիտելիք, հմտություններ և կարողություններ ճարտարապետության ոլորտում մասնագիտական գործունեություն և հետազոտություն իրականացնելու, դասավանդելու և/կամ ուսումը շարունակելու համար:</i>	
Գ Ի Տ Ե Լ Ի Ք	1. Գիտելիք և իմացություն	<p>Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն. Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Ա1. ցույց տալ առաջադեմ գիտելիքներ ճարտարապետական ստեղծարարության հիմքում ընկած գործընթացների, հայեցակարգերի և մշակութային արժեքների մասին,</p> <p>Ա2. վերարտադրել համապարփակ գիտելիքներ և իմացություն ճարտարապետական ստեղծագործության հիմքում ընկած նյութերի լայն տեսականու, շինարարական տեխնոլոգիաների, միջավայրի, քաղաքաշինության (տարածական պլանավորման), պատմաճարտարապետական ժառանգության պահպանության ու վերականգնման, տարածքների գոտիավորման, ճարտարապետական միջավայրի դիզայնի, էներգախնայող և պասիվ համակարգերի ժամանակակից տեսությունների, հետազոտությունների և նախագծման մեթոդների վերաբերյալ,</p> <p>Ա3. ներկայացնել նախագծման, շինարարության գործընթացների պլանավորման և իրականացման խնդիրները,</p> <p>Ա4. արտահայտել գիտելիքներ և իմացություն բնագավառի հայրենական և միջազգային պահանջների, նորմերի և կոնվենցիաների վերաբերյալ,</p> <p>Ա5. ցույց տալ մասնագիտական պատրաստվածություն և սուր քննադատական ընկալում ժամանակակից և պատմական ճարտարապետական ստեղծագործու-</p>	<p>1.1. Դրսևորում է խորը մասնագիտացված գիտելիք, այդ թվում՝ տվյալ ոլորտի վերջին ձեռքբերումների վերաբերյալ, որը կիրառում է ուսումնառության, աշխատանքի և հետազոտության ընթացքում:</p> <p>1.2. Դրսևորում է տվյալ մասնագիտական բնագավառի և հարակից ոլորտների տեսությունների, առաջավոր սկզբունքների ու մեթոդների խորը իմացություն:</p>

		<p>թյունների վերաբերյալ, Ա6. բացահայտել տեղային ու գլոբալ ժողովրդագրության ռեսուրսների հետ քաղաքաշինության և ճարտարապետության կապերը ինովացիոն տեխնոլոգիաների կիրառման բնագավառում, Ա7. պարզաբանել թե ինչպես է ճարտարապետությունը գործում որպես առանձին մասնագիտություն և որպես ստեղծագործական արդյունաբերության մի մաս:</p>	
<p>Կ Ա Ր Ո Ղ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր</p>	<p>2. Գիտելիքի ու իմացության կիրառում</p>	<p>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ և հմտություններ. Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի. Բ1. հիմնվելով տեսության և պրակտիկայի վրա, վերլուծել հետազոտական աշխատանքները, ինտեգրել գիտելիքները և դրանք կիրառել սահմանափակ տեղեկատվության պայմաններում, ինչպես նաև նոր կամ անծանոթ միջավայրում, այդ թվում՝ միջազգային ծրագրերի ենթատեքստում, Բ2. լուսաբանել նորագույն գիտական արդյունքները և զարգացնել գործնական գիտելիքները արդիական գրականության և տեղեկատվության այլ աղբյուրների հիման վրա, Բ3. կիրառել ճարտարապետության և միջմասնագիտական ոլորտներում, սահմանափակ տեղեկատվության պայմաններում տեսական և գործնական խնդիրների լուծման նորարարական մեթոդները, Բ4. վերլուծել բիզնեսի վարման սկզբունքները և դրանք կիրառել նախագծային մենեջմենթում և մասնագիտական գործունեության ժամանակ, Բ5. ընդհանրացնել և վերլուծել ուսումնառության հիման վրա ստացված արդյունքները՝ լուսաբանելով</p>	<p>2.1. Կարող է կիրառել ձեռք բերած գիտելիքը և իմացությունը, մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների առաջավոր սկզբունքները և մեթոդները՝ նոր և անծանոթ իրադրություններում տեսական ու գործնական բարդ խնդիրներ լուծելու, հետազոտական ու նորարարական գործունեություն իրականացնելու համար:</p> <p>3.1. Կարող է կիրառել մասնագիտական հաղորդակցման միջոցները մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը հստակ ու համակարգված ներկայացնելու և բացատրելու իր եզրահանգումները, համապատասխան հիմնավորումներն ու հետազոտության արդյունքները: 3.2. Կարող է վարժ կիրառել S2S-ներ մասնագիտական և (կամ) միջմասնագիտական ոլորտներում նոր և բարդ խնդիրներ լուծելու և հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար: 3.3. Կարող է վերլուծել և գնահատել մասնագիտական և (կամ) միջմասնագիտական ոլորտներին առնչվող քանակական ու որակական տվյալներ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ</p>

	<p>4.Ընդհանրական իմացական կարողություններ (ներառյալ դատողություններ անելը)</p>	<p>ճարտարապետության անցյալ և ներկա բանավեճի խնդիրները, թեմաներն ու արժեքները, ինչպես նաև սահմանելու ճարտարապետական կառույցների մշակութային դրսևորումները,</p> <p>Բ6. գնահատել մասնագիտական հաղորդակցման միջոցները՝ ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լսարանի հետ հաղորդակցվելու և եզրակացություններն ու հետազոտության արդյունքները փոխանցելու նպատակով,</p> <p>Բ7. վերլուծել, սինթեզել և գնահատել տարբեր աղբյուրներում առկա տեղեկատվությունը,</p> <p>Բ8. ցուցաբերել կազմակերպչական ունակություններ մարդկային ռեսուրսների կառավարման և պլանավորման համար, կարողանա ապահովել նախագծի ղեկավարումը և թիմային աշխատանքի ժամանակ կատարել դերաբաշխում, ստանձնի մասնագիտական և իրավական պատասխանատվություն թիմում այլոց աշխատանքի համար,</p> <p>Բ9. համեմատել ճարտարապետության և նրա հետ հատվող այլ ոլորտների խնդիրները:</p>	<p>կայացնելու նպատակով:</p> <p>4.1. Կարող է հետազոտել մասնագիտական ոլորտի հիմնախնդիրները և տալ նորարարական ու ստեղծագործական լուծումներ, ինչպես նաև առաջադրել ոլորտի գիտելիքի և պրակտիկայի ընդլայնմանը միտված արդիական գաղափարներ ու մոտեցումներ:</p>
<p>Հ Մ Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն</p>	<p>5.Ինքնուրույնություն և պատասխանատվություն (ներառյալ սովորելու կարողությունները)</p>	<p>Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ.</p> <p>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Գ1. վերլուծել կատարված հետազոտությունները, իրականացնել հայեցակարգային, նախագծային ու աշխատանքային փաստաթղթերի մշակումներ մասնագիտական ոլորտում,</p> <p>Գ2. ցուցաբերել մասնագիտական մոտեցում և կայացնել որոշումներ՝ հիմնվելով սոցիալական, շրջակա միջավայրի և էթիկական գործոնների վրա,</p>	<p>5.1. Կարող է մասնագիտացման և (կամ) ուսումնառության ոլորտում ծավալել գործունեություն, որը պահանջում է բարդ և անձանոթ աշխատանքային իրադրությունների կառավարման ու վերափոխման ռազմավարական նոր մոտեցումներ:</p> <p>5.2. Կարող է ստեղծել և ղեկավարել մասնագիտական կամ հետազոտական թիմ և պատասխանատվություն ստանձնել նրա անդամների մասնագիտական առաջընթացի համար:</p> <p>5.3. Ունակ է գնահատելու իր կրթական պահանջմունքներն ու մասնագիտական զարգացման կարիքները՝ ուսումնառությունը տարբեր միջավայրերում</p>

		<p>Գ3. գնահատել հետագա կրթության կարիքները և ձեռնարկել մասնագիտական հմտությունների և կարողությունների շարունակական զարգացումը,</p> <p>Գ4. գնահատել ճարտարապետական ուսումնառության ընթացքում ձեռք բերած համատեքստային, մշակութային և բնապահպանական իրազեկվածությունը և արդյունավետորեն կիրառել այն տարբեր իրավիճակներում,</p> <p>Գ5. օժանդակել իր գործունեությամբ ազգային արժեհամակարգի, պատմամշակութային փորձի և համամարդկային արժեքների տարածմանը:</p>	<p>շարունակելու նպատակով:</p> <p>5.4. Ունակ է նպաստելու քաղաքացիական հասարակության զարգացմանը, զուգակցելու ազգային արժեհամակարգը համամարդկային արժեքների հետ:</p>
<p>Աշխատածավալը ECTS կրեդիտներով</p>	<p>120</p>	<p>120</p>	<p>120</p>

073101.01.7 - ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ

Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն		Բ. Գործնական մասնագիտական կարողություններ	
Ա1.	ցույց տալ առաջադեմ գիտելիքներ ճարտարապետական ստեղծարարության հիմքում ընկած գործընթացների, հայեցակարգերի և մշակութային արժեքների մասին,	Բ1.	հիմնվելով տեսության և պրակտիկայի վրա, վերլուծել հետազոտական աշխատանքները, ինտեգրել գիտելիքները և դրանք կիրառել սահմանափակ տեղեկատվության պայմաններում, ինչպես նաև նոր կամ անծանոթ միջավայրում, այդ թվում՝ միջազգային ծրագրերի ենթատեքստում,
Ա2.	վերարտադրել համապարփակ գիտելիքներ և իմացություն ճարտարապետական ստեղծագործության հիմքում ընկած նյութերի լայն տեսականու, շինարարական տեխնոլոգիաների, միջավայրի, քաղաքաշինության (տարածական պլանավորման), պատմաճարտարապետական ժառանգության պահպանության ու վերականգնման, տարածքների գոտիավորման, ճարտարապետական միջավայրի դիզայնի, էներգախնայող և պասիվ համակարգերի ժամանակակից տեսությունների, հետազոտությունների և նախագծման մեթոդների վերաբերյալ,	Բ2.	լուսաբանել նորագույն գիտական արդյունքները և զարգացնել գործնական գիտելիքները արդիական գրականության և տեղեկատվության այլ աղբյուրների հիման վրա,
Ա3.	ներկայացնել նախագծման, շինարարության գործընթացների պլանավորման և իրականացման խնդիրները,	Բ3.	կիրառել ճարտարապետության և միջմասնագիտական ոլորտներում, սահմանափակ տեղեկատվության պայմաններում տեսական և գործնական խնդիրների լուծման նորարարական մեթոդները,
Ա4.	արտահայտել գիտելիքներ և իմացություն բնագավառի հայրենական և միջազգային պահանջների, նորմերի և կոնվենցիաների վերաբերյալ,	Բ4.	վերլուծել բիզնեսի վարման սկզբունքները և դրանք կիրառել նախագծային մենեջմենթում և մասնագիտական գործունեության ժամանակ,
Ա5.	ցույց տալ մասնագիտական պատրաստվածություն և սուր քննադատական ընկալում ժամանակակից և պատմական ճարտարապետական ստեղծագործությունների վերաբերյալ,	Բ5.	ընդհանրացնել և վերլուծել ուսումնառության հիման վրա ստացված արդյունքները՝ լուսաբանելով ճարտարապետության անցյալ և ներկա բանավեճի խնդիրները, թեմաներն ու արժեքները, ինչպես նաև սահմանելու ճարտարապետական կառույցների մշակութային դրսևորումները,
Ա6.	բացահայտել տեղային ու գլոբալ ժողովրդագրության ռեսուրսների հետ քաղաքաշինության և ճարտարապետության կապերը ինովացիոն տեխնոլոգիաների կիրառման բնագավառում,	Բ6.	գնահատել մասնագիտական հաղորդակցման միջոցները՝ ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լսարանի հետ հաղորդակցվելու և

			եզրակացություններն ու հետազոտության արդյունքները փոխանցելու նպատակով,
Ա7.	պարզաբանել թե ինչպես է ճարտարապետությունը գործում որպես առանձին մասնագիտություն և որպես ստեղծագործական արդյունաբերության մի մաս:	Բ7.	վերլուծել, սինթեզել և գնահատել տարբեր աղբյուրներում առկա տեղեկատվությունը,
		Բ8.	ցուցաբերել կազմակերպչական ունակություններ մարդկային ռեսուրսների կառավարման և պլանավորման համար, կարողանա ապահովել նախագծի ղեկավարումը և թիմային աշխատանքի ժամանակ կատարել դերաբաշխում, ստանձնի մասնագիտական և իրավական պատասխանատվություն թիմում այլոց աշխատանքի համար,
		Բ9.	համեմատել ճարտարապետության և նրա հետ հատվող այլ ոլորտների խնդիրները:
Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ			
Գ1.	վերլուծել կատարված հետազոտությունները, իրականացնել հայեցակարգային, նախագծային ու աշխատանքային փաստաթղթերի մշակումներ մասնագիտական ոլորտում,	Գ4.	գնահատել ճարտարապետական ուսումնառության ընթացքում ձեռք բերած համատեքստային, մշակութային և բնապահպանական իրազեկվածությունը և արդյունավետորեն կիրառել այն տարբեր իրավիճակներում,
Գ2.	ցուցաբերել մասնագիտական մոտեցում և կայացնել որոշումներ՝ հիմնվելով սոցիալական, շրջակա միջավայրի և էթիկական գործոնների վրա,	Գ5.	օժանդակել իր գործունեությամբ ազգային արժեհամակարգի, պատմամշակութային փորձի և համամարդկային արժեքների տարածմանը:
Գ3.	գնահատել հետագա կրթության կարիքները և ձեռնարկել մասնագիտական հմտությունների և կարողությունների շարունակական զարգացումը,		

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																				
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Բ7	Բ8	Բ9	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5
Բնագավառի հիմնախնդիրներ	7.20ԲՇՆ001	+	+		+		+		+		+						+	+	+		+	+
Ճարտարապետական նախագծերի կառավարում /BIM տեխնոլոգիաներ/	7.20ՃՆԽ001	+	+								+	+							+		+	+
Ճարտարապետության և քաղաքաշինության իրավական հենք	7.20ԲՇՆ002	+	+		+		+		+		+						+	+	+		+	

Աշխատանք ստեղծագործական թիմում (I) /ստուդիա /	7.20ՃՆԽ002, 7.20ՔՇՆ003, 7.20ՃՏՊ001	+	+	+		+		+	+	+	+		+	+	+	+	+	+	+	+	+
Աշխատանք ստեղծագործական թիմում (II) /ստուդիա /	7.20ՃՆԽ003, 7.20ՔՇՆ004, 7.20ՃՏՊ002	+	+	+		+		+	+	+			+	+	+	+	+	+	+	+	+
Մեյամակայուն շենքերի ճարտարապետական նախագծման հիմունքներ	7.20ՃՆԽ004		+	+					+	+						+	+		+	+	
Բնակելի և հասարակական կառուցապատման նախագծային միջամտություն	7.20ՃՆԽ005		+	+						+	+			+		+	+		+	+	
Էներգախնայող շենքերի նախագծման հիմունքներ	7.20ՃՆԽ006		+	+						+	+					+	+		+	+	
Ճարտարապետական միջավայրի արդիականացում	7.20ՃՆԽ007	+	+			+				+	+	+		+		+	+	+	+	+	
Բարձրաբերձ շենքերի նախագծման առանձնահատկություններ	7.20ՃՆԽ008		+	+	+						+	+				+	+		+		
Տարածական և մեծաթռիչք համակարգեր	7.20ՃՆԽ009		+	+							+	+				+	+		+		
Ճարտարապետական միջավայրի դիզայն /ստուդիա/	7.20ՃՆԽ010		+			+					+	+		+		+	+	+		+	+
Քաղաքաշինությունն արտակարգ իրավիճակներում	7.20ՔՇՆ005		+		+											+				+	
Քաղաքաշինություն և էկոլոգիա	7.20ՔՇՆ006		+		+					+		+		+					+		+
Քաղաքաշինության ռազմավարություն	7.20ՔՇՆ020	+	+	+	+			+		+						+		+		+	
Քաղաքաշինության էկոնոմիկա	7.20ՔՇՆ008		+	+	+						+	+				+				+	
Քաղաքաշինություն և տրանսպորտ	7.20ՔՇՆ009		+								+					+					
Խոշորագույն քաղաքների հիմնախնդիրները	7.20ՔՇՆ010		+	+	+					+	+	+								+	
Ճարտարապետության տեսության զարգացում և ճարտարապետական նախագծման մեթոդաբանություն	7.20ՃՏՊ003	+	+		+	+				+		+		+							+
Ճարտարապետության զարգացման արդի միտումները	7.20ՃՏՊ004	+	+		+	+	+			+		+		+						+	+

Ճարտարապետական հուշարձանների վերականգնման մեթոդաբանություն	7.20ՃՏՊ005	+	+		+	+				+				+						+	
Պատմական քաղաքների, ճարտարապետական հուշարձանների վերակառուցում	7.20ՃՏՊ006	+	+		+	+				+				+				+		+	+
Ինտերիերի դիզայն /ստուդիա/	7.20ՃՆԽ011		+			+				+					+	+	+	+	+	+	
Ինտերիեր դիզայնի պատմություն	7.20ՃՏՊ007		+			+		+						+							
Ճարտարապետական հուշարձանների վիմագրություն և հնագիտություն	7.20ՃՏՊ008	+	+		+	+				+				+				+		+	+
Ինովացիոն տեխնոլոգիաները ճարտարապետության մեջ	7.20ՃՆԽ012	+	+	+						+		+				+	+		+		+
Քաղաքային ենթակառուցվածքները և նրանց փոխակերպումը	7.20ՔՇՆ011	+	+	+						+					+	+		+			+
Բնագավառի կադաստր և ԵՏՀ	7.20ՔՇՆ012		+							+					+	+		+			
Կայուն քաղաքաշինություն և ճարտարապետություն	7.20ՔՇՆ013	+	+							+				+							+
Ճարտարապետական կառույցի անալիտիկ վերլուծություն	7.20ՃՏՊ009	+	+				+			+			+	+	+		+	+			+
Գիտության տեսություն և գիտահետազոտական աշխատանքների կատարման մեթոդաբանություն	7.20ՃՏՊ010	+	+				+			+			+	+			+				+
Պրակտիկա /արվեստանոցային ժամ/	7.20ՃՆԽ013, 7.20ՔՇՆ014, 7.20ՃՏՊ011	+	+	+	+	+	+	+					+		+	+		+	+		+
Հետազոտություն, նախագծում (2ԿՆ), մագիստրոսական թեզի (ՄԹ) պատրաստում և պաշտպանություն	7.20ՃՆԽ014, 7.20ՔՇՆ015, 7.20ՃՏՊ012	+	+	+	+	+	+	+	+	+	+		+	+	+	+	+	+	+	+	+

